

Դիմումների կարգավիճակներ

Մուտքագրվում է	Այս կարգավիճակը դիմումն ընդունում է այն ժամանակ, երբ դիմումի մուտքագրման գործընթացն ավարտված չի՝ այն չի հաստատվել <Ավարտել դիմումի մուտքագրումը> ստեղծը սեղմելով: Տվյալ կարգավիճակով դիմումներում օգտվողը հնարավորություն ունի ավելացնել երեխաների տվյալներ, ինչպես նաև, ըստ պահանջի կցել անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները:
Մուտքագրումն ավարտվել է	Այս կարգավիճակը դիմումը ստանում է այն ժամանակ, երբ օգտվողը սեղմում է <Ավարտել դիմումի մուտքագրումը> ստեղծը՝ էկրանին տրվում է հաղորդագրություն՝ <Դիմումի մուտքագրումը հաջողությամբ ավարտվել է>: Սա նշանակում է, որ օգտվողն այլևս չի կարող տվյալ դիմումով ավելացնել երեխաների տվյալներ, դիմումի մուտքագրման գործընթացը համարվում է ավարտված:
Մերժվել է	Այս կարգավիճակը դիմումը ստանում է այն ժամանակ, երբ տվյալ դիմումով որևէ երեխայի տվյալ չի գրանցվում, կամ ներկայացված ոչ մի երեխայի համար աջակցության նշանակման պայմանները չեն բավարարվում: <Ավարտել դիմումի մուտքագրումը> ստեղծը սեղմելիս էկրանին բերվում են հաղորդագրություններ, որոնցով նշվում են, ինչ պայմաններ չեն բավարարվել:

Երեխաների տվյալների կարգավիճակներ

Մուտքագրվում է	Երեխաների (երեխայի) տվյալները մուտքագրելուց կամ ՔԿԱԳ-ից ներբեռնելուց հետո <Մուտքագրված երեխաների տվյալներ> դաշտում տվյալ երեխայի կարգավիճակը դառնում է <Մուտքագրվում է> (քանի դեռ չի տրվել դիմումի ավարտ):
Մուտքագրումն ավարտված է	<Մուտքագրված երեխաների տվյալներ> դաշտում տվյալ երեխայի կարգավիճակը դառնում է <Մուտքագրումն ավարտված է > երբ տվյալ դիմումին տրվել է <Ավարտել դիմումի մուտքագրումը>: Տվյալ կարգավիճակը նշանակում է, որ դեռևս

	<p>պետք է իրականացվեն հետևյալ ստուգումները</p> <p>1) տվյալները պետք է համադրվեն ՍԷԿՏ-ի տվյալների հետ 2) երեխայի տվյալները մուտքագրվել են օգտվողի կողմից՝ ՔԿԱԳ-ում չլինելու պատճառով, որի ուսումնասիրությունը պահանջում է հավելյալ ժամանակ)</p>
Նշանակվել է աջակցություն	<p><Մուտքագրված երեխաների տվյալներ > դաշտում կարգավիճակը դառնում է <Նշանակվել է աջակցություն >, երբ աջակցության գումարն արդեն ուղարկվել է վճարման:</p>
Աջակցության նշանակումը մերժվել է	<p><Մուտքագրված երեխաների տվյալներ > դաշտում կարգավիճակը դառնում է <Աջակցության նշանակումը մերժվել է> , երբ ստուգումների արդյունքում աջակցության նշանակման մերժման հիմքեր կան: Մերժման պատճառների հաղորդագրությունները ցուցադրվում են էկրանին:</p>
Աջակցությունը նշանակվել է մեկ այլ դիմումով	<p><Մուտքագրված երեխաների տվյալներ > դաշտում տվյալ երեխայի կարգավիճակը դառնում է <Աջակցությունը նշանակվել է մեկ այլ դիմումով>, երբ տվյալ երեխայի աջակցությունն արդեն նշանակվել է մեկ այլ դիմումով և ուղարկվել է վճարման:</p>
Աջակցության նշանակումը ստուգման փուլում է մեկ այլ դիմումով	<p><Մուտքագրված երեխաների տվյալներ > դաշտում կարգավիճակը դառնում է <Աջակցության նշանակումը ստուգման փուլում է մեկ այլ դիմումով> , երբ տվյալ երեխայի համար գրանցված է առնվազն մեկ այլ դիմում, որի մուտքագրումն ավարտված է:</p> <p>Տվյալ կարգավիճակը նշանակում է, որ դեռևս պետք է իրականացվեն հետևյալ ստուգումները</p> <p>1) տվյալները պետք է համադրվեն ՍԷԿՏ-ի տվյալների հետ 2) երեխայի տվյալները մուտքագրվել են օգտվողի կողմից՝ ՔԿԱԳ-ում չլինելու պատճառով, որի ուսումնասիրությունը պահանջում է հավելյալ ժամանակ)</p>

Հաղորդագրություններ

<p>1. Աջակցությունը մերժվում է, քանի որ ընտանիքն ընդգրկված է անապահովության գնահատման «Փարոս» համակարգում</p>	<p>Հաղորդագրությունը արտահանվում է այն դեպքում, երբ անձի տվյալները գրանցված են այլ աջակցության՝ անապահովության գնահատման «Փարոս» համակարգում, ուստի այս միջոցառումից օգտվել չի կարող:</p>
<p>2. Աջակցությունը մերժվում է դիմողի աշխատելու կամ ԱԶ հանդիսանալու պատճառով</p>	<p>Հաղորդագրությունն արտահանվում է դիմողի որպես վարձու աշխատող կամ անհատ ձեռնարկատեր գրանցված լինելու դեպքում, ուստի այս միջոցառումից օգտվել չի կարող:</p>
<p>3. Ձեր դիմումը մերժվում է, քանի որ լրացված անուն կամ ազգանուն դաշտում կա անճշտություն</p>	<p>Հաղորդագրությունն արտահանվում է, երբ մուտքագրված անունը կամ ազգանունը չի համապատասխանում անձ հաստատող փաստաթղթում գրված տվյալներին – անհրաժեշտ է ստուգել և նորից մուտքագրել ճիշտ տվյալներ;</p>
<p>4. Ձեր դիմումը մերժվում է, քանի որ նշված անձ հաստատող փաստաթուղթը չի հայտնաբերվել բնակչության պետական ռեգիստրում</p>	<p>Հաղորդագրությունն արտահանվում է, երբ որ մուտքագրված անձ հաստատող փաստաթղթի տվյալները սխալ են</p>
<p>5. Աջակցությունը մերժվում է “ԱՆՈՒՆ”, “ԱԶԳԱՆՈՒՆ”-ի քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) տվյալների անհամապատասխանության պատճառով:</p>	<p>Հաղորդագրությունն արտահանվում է, երբ՝</p> <ol style="list-style-type: none"> 1. դիմող անձի տվյալները չեն համապատասխանում քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) տվյալների հետ (օրինակ ազգանունը փոխվել է, սակայն ԲՊՈ-ում ազգանվան փոփոխություն չի կատարվել) 2. չի գտնվել երեխայի և դիմողի (ծնող-երեխա) կապը, 3. նշում է կատարվել «միայնակ ծնող», կամ «մահացած ծնող», սակայն ՔԿԱԳ-ում առկա է երեխայի ծնողի մասին տվյալներ
<p>6. “ԱՆՈՒՆ”, “ԱԶԳԱՆՈՒՆ”-ի համար այս դիմումով աջակցության տրամադրումը մերժվում է, քանի որ</p>	<p>Հաղորդագրությունն արտահանվում է , երբ տվյալ երեխայի համար կա նույն կամ այլ դիմող անձով գրանցված առնվազ մեկ դիմում,</p>

<p>տվյալ երեխայի համար աջակցության տրամադրումը բավարարվել է մեկ այլ դիմումով:</p>	<p>որով աջակցությունն արդեն բավարարվել է, 3 օրվա ընթացքում կգնա վճարման: Նոր դիմում գրանցելու անհրաժեշտություն չկա :</p>
<p>7. “ԱՆՈՒՆ”, “ԱԶԳԱՆՈՒՆ”-ի աջակցությունը մերժվում է ծնողի աշխատելու կամ ԱԶ հանդիսանալու պատճառով:</p>	<p>Հաղորդագրությունն արտահանվում է, երբ երեխայի մյուս ծնողը գրանցված է որպես վարձու աշխատող կամ անհատ ձեռնարկատեր:</p>
<p>8. Աջակցությունը մերժվում է, քանի որ “ԱՆՈՒՆ”, “ԱԶԳԱՆՈՒՆ”-ը գտնվում է պետության խնամքի տակ:</p>	<p>Հաղորդագրությունն արտահանվում է, երբ տվյալ անձը գտնվում է պետության խնամքի տակ, ուստի այս միջոցառումից օգտվել չի կարող:</p>
<p>9. Աջակցությունը մերժվում է, քանի որ Ձեր ներկայացրած տվյալներով մյուս ծնողը չի հայտնաբերվել բնակչության պետական ռեգիստրում</p>	<p>Հաղորդագրությունն արտահանվում է, երբ երեխայի մյուս ծնողի ՔԿԱԳ-ում առկա տվյալներով բնակչության պետական ռեգիստրում անձ չի հայտնաբերվել կամ մյուս ծնողի լրացված տվյալներով անձը չի հայտնաբերվել</p>
<p>10. աջակցությունը մերժվում է, քանի որ նշված երեխան և նշված մյուս ծնողը չեն հանդիսանում ծնող և զավակ</p>	<p>Հաղորդագրությունն արտահանվում է, ՔԿԱԳ-ի տվյալների համադրման արդյունքում,</p>